ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(27), 31 մարտի, 2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ վարչապետ պարոն Փաշինյանի առաջարկով և Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով 2020 թ. մարտի 19-ին Արման Սարգսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ:

Հարգելի՛ պարոն Սարգսյան, մեծ հաջողություններ ենք մաղթում Ձեզ ժողովրդին ծառայելու սրբազան գործում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՈՎ

Պետական զարգացման գործում ներդրած անձնական մեծ ավանդի, բազմամյա նվիրումի և արգասաբեր աշխատանքի համար ՀՀ նախագահի 19.03.2020թ. ՆՀ 59-Ա հրամանագրով Երախտագիտության մեդալով պարգևատրվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Էդուարդի Սուքիասյանը:

Շնորհավորում ենք ու մաղթում նորանոր բարձունքներ, խաղաղ ու անվտանգ ճանապարհ հայրենիքին ծառայելու գործում:

«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿ

2020 թվականի մարտի 12-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ու վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոններին կից գործող պետահրավական առարկաների գիտական խմբակի 2019-2020 ուստարվա չորրորդ նիստը:

Նիստին ներկա էին կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սաֆարյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Ա. Մարգարյանը, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Ա. Ադամյանը և գիտական աշխատանքների բաժնի ներկայացուցիչը:

▶ 2

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետը սահմանում է, որ արտակարգ դրության ամբողջ ընթացքում դադարեցվում է ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացը՝ բացառությամբ հեռավար ուսուցման:

Նշված որոշման հիման վրա ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից տրվել է հրաման «Արտակարգ դրության ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ուսումնական գործընթացը մասամբ հեռավար ուսուցման ձևով իրականացնելու մասին»: Համաձայն նշված հրամանի՝ մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի դադարեցումը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար և վճարովի ուսուցման առաջին, երկրորդ, երրորդ կուրսերի, մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի, քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերի ուսումնական պարապմունքներն իրականացվում են հեռավար ուսուցմամբ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողները կարճ ժամանակում ինտեգրվեցին այդ գործընթացին, և մեր ովորողները մեծ ոգևորությամբ հետևում ու ակտիվորեն արձագանքում են հեռավար դասընթացներին:

ԿԻՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Տարբեր երկրների դրոշներ, իրավապահ համակարգի տարատեսակ համազգեստներով կանայք և ջերմ գարնանային մթնոլորտ՝ հյուրընկալ Թբիլիսիում:

2020թ. մարտի 3-ից 6-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում էին Հյուսիսային Մակեդոնիայի, Կոսովոյի, Պակիստանի Իսլամական, Ալբանիայի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ղրղզստանի հանրապետությունների, Վրաստանի, Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կին ներկայացուցիչները, որոնց նպատակն էր ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) բաժնի կողմից կազմակերպված «Կանայք ոստիկանությունում» 2020թ. ամենամյա համաժողովին մասնակցելը: Հայաստանը ներկայացնում էին ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի տարբեր ստորաբաժանումների կին ծառայողներ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցիչներն էին քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Մարիամ Կարապետյանը և միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Անի Ղուկասյանը:

Դասընթացի սկզբում ելույթ ունեցավ Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին, ով շնորհավորեց գարնանային տոնի կապակցությամբ և շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին:

Ծրագիրը կանանց համար իրավապահ համակարգում իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները զարգացնելու և փոխանակելու կարևոր դեր ու նշանակություն ունի:

Մասնակիցներին ու կազմակերպիչներին շնորհակալական ուղերձ հղեց Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելլի Դեգնանը: Նա, մեկ րոպե լռությամբ հարգելով ծառայության ժամանակ զոհված կին ոստիկանների հիշատակը, ընդգծեց, որ իրավապահ համակարգում կնոջ դերակատարությունն անչափ կարևոր է բռնություններն ու հանցագործությունները կանխելու համար, և կնոջ համար շատ ավելի դյուրին է շփումը հասարակության բոլոր ներկայացուցիչների հետ:

▶ 2

ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Հազվադեպ է պատահում, որ մարդիկ միմյանց գրավոր կամ բանավոր երախտագիտական խոսքեր ասեն: Եթե զգույշ չլինենք, տարածված անտարբերությունն ու անշնորհակալ վերաբերմունքը կարող են խեղդել, ոչնչացնել մեր մեջ երախտագիտության զգացումն անգամ, որը, սակայն, ուզում ենք արտահայտել, քանի որ երախտիքի խոսքերը մտերմացնում են և՛ ասողին, և՛ նրան, ում ուղղված են այդ խոսքերը:

Նրանք, ովքեր երբևէ անսպասելի ստացել են շնորհավորանքի և շնորհակալական բացիկ, և նրա բովանդակությունը ջերմացրել է սիրտը, կհասկանան ինձ, կհասկանան իմ հույզերը:

Քանի որ մարդկային որակներից առավել գնահատում եմ հենց շնորհակալ լինելու ունակությունը, հետևաբար, սրտանց ցանկանում եմ իմ երախտիքի խոսքն ուղղել ՀՀ կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանին և պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմին՝ Մարտի 8-ի կապակցությամբ զինվորների մայրերին գեղեցիկ բացիկներով շնորհավորելու ու ջերմ բարեմաղթանքներով քաջալերելու, խրախուսելու համար:

Ես՝ որպես զինվորի մայր, երիցս հպարտ եմ, որ որդիս՝ Էրիկ Թամոյանը, սովորել է և զորացրվելուց հետո էլ սովորելու է մի ուսումնական հաստատությունում, որտեղ մարդուն գնահատում են որպես իսկական արժեք: Համոզված եմ, որ Ձեր կրթած ու դաստիարակած սաները միշտ և ամենուր բարձր կպահեն թե՛ ընտանիքի և թե՛ հարազատ կրթօջախի պատիվը:

Էլյա Թամոյան

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՄԱՐՏԻ 8 ՍԻՐԵԼԻ�simՐ ԿԱՆԱՅՔ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավարությունը և պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմը շնորհավորում է ձեզ միջազգային տոնի կապակցությամբ՝ ցանկանալով անսահման սեր, առողջություն և խաղաղություն: Այս տարի նույնպես Կրթահամալիրի ղեկավարությունը և քոլեջի լեզուների ամբիոնը շնորհավորական բացիկներ են ուղարկել իրավագիտության ֆակուլտետի ժամկետային զինծառայության մեկնած զինվորների մայրերին՝ ցանկանալով նրանց համբերություն, իսկ որդիներին՝ բարի ծառայություն և բարի վերադարձ:

Անհիշելի ժամանակներից հայ կինը եղել և մնում է ընտանեկան ջերմության և ավանդույթների իրական պահապանը: Եվ բնավ էլ զարմանալի չէ, որ հայ մայրն իր մեծ ավանդն ունի նաև ուժային կառույցներում և հայրենիքը պաշտպանելու մեծագույն գործում:

Գարնանային այս գեղեցիկ տոնի կապակցությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անձնակազմը ևս մեկ անգամ սրտանց և ջերմորեն շնորհավորում է կանանց, աղջիկներին, մայրերին ու քույրերին:

ՀԱՐԳԵԼԻ՛ՊԱՐՈՆ ԲԱԲԱՅԱՆ

Ամենայն անկեղծությամբ խորին շնորհակալությունս եմ հայտնում Ձեզ՝ ծառայող սովորողների մայրերի նկատմամբ նման ուշադրության և հոգածության համար: Մարտի 8-ի կապակցությամբ Ձեր հանձնարարությամբ ուղարկված բացիկը շատ ավելին է ասում Ձեր մարդ տեսակի մասին:

Հպարտ եմ, որ որդիս՝ Վարդան Իսրայելյանը, սովորում է մի ուսումնական հաստատությունում, որտեղ պետից մինչև կրտսեր տեսուչ օժտված են մարդկային առաքինություններով և ուշադրության կենտրոնում են պահում ոչ միայն սովորողներին ու բանակում ժամկետային ծառայությունն անցկացնող երբեմնի սաներին, այլ նաև նրանց մայրերին:

Ձեր վերաբերմունքը ոչ միայն քաջալերող է ու ոգևորող, այն նաև երիցս պարտավորեցնող է:

Հավաստիացնում եմ, որ որդիս հետայսու ևս կփայլի իր ծառայությամբ և հավատարիմ կմնա այն հայրենասիրական վեհ գաղափարներին, որով կրթել ու դաստիարակել եք Ձեր ուսումնական հաստատությունում:

Շնորհակալություն:

Սուսաննա Մարտիրոսյան

ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԳՆԱՀԱՏԵԼ ՄԻՇՏ ԵՎ ԱՄԵՆՈՒՐ

Մարտի 8-ն ամբողջ աշխարհում տարբեր ազգությունների կանայք, անկախ իրենց լեզվական, մշակութային առանձնահատկություններից ու քաղաքական հայացքներից, համախմբվում են՝ նշելու կնոջ օրը, որն արդեն ինը տասնամյակ է, ինչ պայքարում է հանուն հավասարության, արդարության և խաղաղության: Հարկ է, սակայն, նշել, որ կանանց օրը տոնվել է այլ նշանակությամբ: Մարտի 8-ը հեղափոխական կանանց փառաբանելու համար էր, ովքեր ձգտում էին տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունենալ:

Ժամանակի ընթացքում տոնի քաղաքական մասը մոռացվել է, և մնացել միայն անհրաժեշտությունը՝ գարնանը պատվել կանանց՝ իրենց գեղեցկության, քնքշության և անսահման սիրելու ունակության համար: Իսկ օրացուցային հաշվարկից դուրս՝ այդ օրը սիրելի ու հարազատ կանանց մեկ անգամ էլ ուրախ պահեր, ժպիտ, սեր ու երջանկություն նվիրելու օր է:

Այսօր կանայք, բացի ընտանիքի հիմնական հոգսերից, իրենց ուսերին են վերցրել նաև տղամարդուն բնորոշ գործեր: Կանայք հիմա բոլոր ոլորտներում են. որպես նախագահներ՝ երկիր են ղեկավարում, որպես ոստիկաններ՝ հասարակական կարգը պահպանում, որպես փրկարարներ՝ կյանքեր փրկում, անգամ որպես շինարարներ՝ շենքեր են կառուցում, բայց այդ ամենով հանդերձ, կանայք չեն դադարում կյանքի շարժիչ ուժը, ընտանիքի հիմքն ու հենասյունը լինելուց: Առանց կանանց չեն շարունակվի ազգը, բանակը, հասարակությունը:

Գեղեցկության, մեղմության, սիրո, քնքշանքի տոնը ոստիկանությունում ծառայող կանանց համար նաև ուժի, հպարտության, հայրենասիրության, քաջության տոն է, և ոստիկանի համազգեստը, որ կրում են սիրով ու հպարտությամբ, ավելի է ընդգծում նրանց կանացիությունն ու հմայքը: Նրանք մայր են ու օրենքի պաշտպան, քույր են ու ոստիկան, դուստր են ու ռազմիկ, կին են ու զինվորական:

Դարերն են ծայնում, որ պայծառ է ճշմարիտ հայուհու կերպարը՝ ազնվաբարո, վեհանձն: Ակներև է հայ կնոջ գործուն դերը ազգապահպանության և մեր ինքնությունն անխաթար պահելու խնդրում: Մեր մայրերն ու տատիկներն իրենց զավակների հոգիները սնուցել են լուսատենչ պտուղներով՝ պատգամելով վեհագույն արժեքներ՝ հայրենասիրական ոգի և սրբապաշտություն:

Գարնանային այս գեղեցիկ տոնը պատեհ առիթ է սիրո, երախտիքի և մեծարման խոսքեր հղելու մեր մայրերին, քույրերին, կանանց ու դուստրերին: Սիրելի՛ կանայք, ձեր սիրառատ ոգու ջերմությամբ նորոգվում ու ապաքինվում են ձեր հարազատների սրտերը:

Այս արևշատ օրը բերկրում են մեր հոգիները, քանզի մեծարում ենք մեր մայրերին, քույրերին ու դուստրերին, գնահատում նրանց բարեբեր ավանդն ընտանեկան կյանքում և պետական-հասարակական ասպարեզներում:

Մեր սիրելի՛ կանայք և աղջիկներ, շնորհավորում ենք ձեզ գարնանային միամսյակի կապակցությամբ, ձեզանից յուրաքանչյուրին մաղթում մեծ սեր, կանացի երջանկություն և գործնական հաջողություններ: Միշտ եղե՛ք սիրված և սիրե՛ք, քանի որ կյանքը գույներ է ստանում միայն սիրո մեջ:

Աննա Սարուխանյան
ոստիկանության կապիտան

«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿ

1 ◀ Գիտական խմբակի նիստի թեման էր՝ «Օրինականության ապահովման հիմնախնդիրները ոստիկանությունում»:

Նշված թեմայով գիտական զեկույցով հանդես եկավ վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության գնդապետ Վ. Գրիգորյանը, ով մեկնաբանեց օրինականության հասկացությունը և ներկայացրեց ոստիկանությունում օրինականության ապահովման գործընթացի առանձնահատկությունները:

Գիտական նյութի ներկայացումից հետո նիստի մասնակիցները զեկուցողին ուղղեցին հարցեր, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

ԿԻՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

1 ◀ Դասընթացի մյուս օրերին մասնակիցները ծանոթացան ԱՄՆ տարբեր նահանգներում ծառայող կին ոստիկանների փորձառությանը, հաջողության հասնելու նրանց օրինակին, լսեցին ամերիկացի փորձագետների դասախոսությունները հաղորդակցման, ղեկավարման հմտությունների, կին սպաների գործունեության, առաքելության և սկզբունքների մասին, նաև կատարեցին գործնական առաջադրանքներ, ակտիվորեն մասնակցեցին տակտիկական պատրաստականության վարժախաղերին:

Մարիամ Կարապետյանը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում դասավանդում է մասնագիտական հոգեբանություն և հաղորդակցման հմտություններ առարկաները: Համաժողովում ստացած գիտելիքները նա պատրաստվում է կիրառել իր դասախոսությունների ընթացքում, քանի որ համաժողովի բոլոր դասախոսությունները, ըստ նրա, յուրովի հետաքրքիր էին և ուսանելի:

Հարցին, թե դասախոսություններից ստացած ինչ հմտություններ կարելի է առանձնացնել, որոնք առավել անհրաժեշտ են կին ոստիկանին արդյունավետ հաղորդակցվելու համար, Մարիամ Կարապետյանը պատասխանեց՝ դիմացինին հասկանալը, կարեկցելը, խնդիրներին ու մարդկանց քննադատաբար չվերաբերվելը:

Ըստ մասնակցի՝ համաժողովն ընդհանուր առմամբ միջազգային փորձագետների հետ ծանոթանալու, համագործակցելու և տարբեր երկրների ոստիկանների փորձի փոխանակման հիանալի հնարավորություն էր:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ԲԱՐԵԽԻՂՃ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

2020 թվականի փետրվարի 26-ին կայացավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի օպերատիվ խորհրդակցության հերթական նիստը, որի ընթացքում՝ ծառայողական գործունեության արդյունքներով 2019 թվականին բարձր ցուցանիշներ ապահովելու, ինչպես նաև ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու համար ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտակ Ռոբերտի Հովհաննիսյանը ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Արման Սարգսյանի հրամանով պարգևատրվեց «Օրենքի պատվար» մեդալով:

Մեդալը հանձնեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը՝ շնորհավորելով և շնորհակալություն հայտնելով բարեխիղճ ծառայության համար:

ՆՇՎԵՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Ամեն տարի այս օրը՝ մարտի 27-ին, աշխարհի տարբեր ծայրերում հանդիսավոր նշվում է Թատրոնի միջազգային օրը՝ որպես թատրոնի մշակների ու գործիչների մասնագիտական տոն: Տոն, որը մեկ անգամ ևս առիթ է ամփոփելու և արժևորելու թատրոնի երախտավորներին ու նրանց թողած ավանդները: Այս օրը մեր մշակութային կյանքում սիրված ու սպասված տոներից է, և հազարամյակների պատմություն ունեցող հայ թատրոնը նույնպես իր մասնակցությունն ունի մասնագիտական տոնին:

Թատրոնը մարդկության երազների, իղձերի ու վեհ գաղափարների կերտման, անցյալի ու ներկայի համամարդկային արժեքների բյուրեղացման մի ինքնատիպ քուրա է, որը սիրո, բարության, հայրենասիրության անվերջանալի դասեր է տալիս: Այդ զարմանալի արվեստն առանձնանում է ունեցածի արժևորման ու նորի գիտակցման ներդաշնակությամբ: Իր տեսակով թատրոնը միաժամանակ համադրում է արվեստի մի շարք ճյուղեր՝ այն դարձնելով առավել պահանջված ու դիտարժան: Թատրոնը մեր կյանքում առանցքային տեղ է գրավում, որովհետև հայ մարդն իրեն հուզող բազմապիսի հարցերի ու խնդիրների լուծման բանալին փնտրել է նաև թատրոնում՝ առանձնահատուկ վերաբերմունք տածելով թատրոնի և թատերական գործչի հանդեպ:

21-րդ դարի թատրոնը և թատրոնի մարդիկ բազմաթիվ խնդիրներ ունեն, սակայն սա չի խանգարում մասնագիտական օրը նշել հանդիսավորությամբ:

Թատրոնն ավելին է, քան արվեստի ճյուղը, այն շատերի համար դարձել է ապրելու իմաստ, կենսակերպ:

Ջերմորեն շնորհավորում ենք թատերական բոլոր գործիչներին և թատրոնի նվիրյալներին մասնագիտական տոնի՝ Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ և մաղթում արևշատություն, ստեղծագործական խիզախումներ, լեփ-լեցուն դահլիճներ, հյուրախաղեր, բուռն ծափահարություններ և ամենակարևորը՝ հանդիսատեսի սեր ու հարգանք:

Հավատարիմ լինենք թատրոնի փիլիսոփայությանը, հաճախ այցելենք այդ հրաշալի և գեղեցիկ աշխարհը:

Արուսյակ Քոչարյան

ԸՆՏՐՎԵՑ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

Կրթահամալիրում մարտի 12-ին ուսանողական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առաջին նիստն էր: Հանդիպման սկզբում բացման խոսքով հանդես եկավ ուսանողական խորհրդի նախկին նախագահ Սերգեյ Բադալյանը, որից հետո ներկայացվեց նիստի օրակարգը:

Նիստի անցկացման հիմնական նպատակն էր ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունը, քարտուղարի նշանակումը, անդամների կազմում փոփոխությունների կատարումը:

Ընտրությունն ընթացավ համաձայն «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի սովորողների ուսանողական խորհրդի կանոնադրության 12.2 ենթակետի: Ուսանողական խորհրդի նախագահի թեկնածուները 2 էին՝ Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 2-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Արմեն Մկրտչյանը և իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման 3-րդ կուրսի սովորող Սամվել Հակոբյանը: Ձայների մեծամասնությամբ ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց Սամվել Հակոբյանը:

Նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց իր ընկերներից վստահության համար՝ ընդգծելով, որ բավականին պատասխանատու և բարդ գործ են իրեն վստահել, ինչը շատ կարևոր է հետագա աշխատանքները համակարգելու համար:

-Կրթահամալիրում ՈՒԽ հիմնական գործառույթը եղել և մնում է ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, որը դրսևորվելու է Կրթահամալիրի ղեկավարման գործում ակտիվ մասնակցությամբ, - ասաց նորընտիր նախագահը: Նույն կանոնադրության 14-րդ կետի համաձայն՝ ուսանողական խորհրդի նախագահն ուսանողական խորհրդի քարտուղար նշանակեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Լիլյա Հովակիմյանին:

Շնորհավորում ենք ուսանողական խորհրդի նորընտիր նախագահին, ուսխորհրդի նոր կազմին՝ մաղթելով արդյունավետ և արգասաբեր գործունեություն:

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՀՄԱՅՔԸ

Թատրոնում փետրվարի 21-ը միշտ տարբերվում էր մյուս օրերից: Այդ օրը կուլիսներում փոքր-ինչ տխուր, բայց իմաստալից երեկո էր կազմակերպվումգ նույն շոկոլադե տորթը, նույն հայկական կոնյակը և նույն մարդիկ նստած քննարկում էին վերջին հանձնած ներկայացումն ու վերջում հիշում, թե ինչու էին հավաքվել:

Հավաքվել էին, որովետև Մետաքսի ծնունդն էր: Թեման փոխվում էր, և կենտրոնում հայտնվում էր դերասանուհինգ

-Մետաքսյայի արտահայտչական միջոցները շատ են, ճիշտ է, - ասում էր Վահրամ Փափազյանը,- բայց լավագույնը, ըստ իս, ձայնային տվյալների հարստությունն է, որով խոսքը նրա շուրթերում ոչ միայն բազմերանգ է և ախորժալուր, այլև հասնում է սրահին դերասանուհու ամբողջ ներաշխարհով:

Միանգամայն իրավացի էր Փափազյանը:

ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Մետաքսյա Սիմոնյանը հայ թատրոնի ինքնատիպ և ամենառոմանտիկ դերասանուհիներից էր: Նրա ստեղծագործության հիմնական թեման կնոջ արժանապատվության և իրավունքների պաշտպանությունն էր:

Մետաքսյա Սիմոնյանը ծնվել է Աշխաբադում: 1933 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: 1948 թ. ավարտել է Երևանի թատերական ինստիտուտը (ղեկավար՝ Վարդան Աճեմյան): Նույն թվականին հրավիրվել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոն: 1968 թվականից դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում (1983 թ-ից՝ պրոֆեսոր):

Դեռևս սովորելու տարիներին հաջողությամբ խաղացել է զվարթ ու կենսախինդ Կատերինայի (Ֆեոդոր Սոլոգուբի «Քնքույշ սրտից պատուհաս»), խոհուն և սիրառատ Անանիի (Գաբրիել Սունդուկյանի «Էլի մեկ զոհ») դերերը: Առաջին հիշարժան դերերից են Արմանուշը (Գրիգոր Տեր-Գրիգորյանի «Այս աստղերը մերն են», ԽՍՀՄ Պետական մրցանակ՝ 1950 թ.), Նինան (Միխայիլ Լերմոնտովի «Դիմակահանդես», Արբենինի դերում՝ Վահրամ Փափազյան): Նինայի դերակատարումն աչքի է ընկել հմայքով ու գրավչությամբ:

Ստեղծագործական կյանքի բարձունքին Սիմոնյանը խաղացել է Նաստասյա Ֆիլիպովնայի (ըստ Ֆեոդոր Դոստոևսկու «Ապուշը» վեպի) դերը, որն իր հոգեկերտվածքով բացառիկ անհատականություն է համաշխարհային գրականության կանանց կերպարների շարքում:

Դերասանուհու մարմնավորած Նաստասյա Ֆիլիպովնան հակասությունների շիկացած հանգույց էր. նրա կերպարում շեշտված էին սերն ու ատելությունը, հոգու վսեմությունն ու խռովքը, հաշտվողականությունն ու ընդվզումը, ազնվությունն ու հաստատակամությունը: «Այսպիսի Նաստասյա Ֆիլիպովնա ես կուզեի տեսնել մեր թատրոնում»,– ասել է ռուս անվանի ռեժիսոր Գեորգի Տովստոնոգովը:

Նա նաև հանդես է եկել ասմունքով: Խաղացել է ռադիո և հեռուստատեսային ներկայացումներում: Հյուրախաղերով հանդես է եկել Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Բեյրութում, Դամասկոսում և այլուր:

Մետաքսյա Սիմոնյանն արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչմանը:

«Մետաքսյա Սիմոնյանին բնությունը պարգևել է հմայիչ արտաքին, նազանք, բեմական ուժեղ զգացողություն, լիրիկականություն: Նրա կատարած դերերը հմայիչ են, աչք շոյող»,-ասել է Գուրգեն Ջանիբեկյանը:

Հայ թատրոնը գեղարվեստի աշխարհին տվել է Մետաքսյա Սիմոնյանի նման հանճարներ, և նրանց ստեղծած դպրոցն այսօրվա երիտասարդ դերասանների համար դարձավ անզուգական դարբնոց:

Մարիետա Խերանյան
ոստիկանության ավագ լեյտենանտ

Հետայսու «Պատիվ ունեմ» պաշտոնաթերթում պարբերաբար ձեզ ենք ներկայացնելու ՀՀ ոստիկանության պարգևները:

Սիրելի՛ ոստիկանության ծառայողներ, ճանաչե՛ք այն բոլոր պարգևները, որոնց կարող եք արժանանալ ձեր հայրենանվեր ու անբասիր ծառայությամբ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ

«Սխրագործության համար» մեդալով ծառայողները պարգևատրվում են ծառայողական պարտականությունները կատարելիս կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող պայմաններում սխրագործություն կատարելու համար:

«Մարտական զորակցություն» մեդալով ծառայողները պարգևատրվում են ծառայողական պարտականությունների գերազանց կատարման, ոստիկանության գործունեության զարգացման, մարտական զորակցության և ոստիկանության խնդիրների իրականացման գործում զգալի ավանդ ներդնելու համար:

ՄԵՁԵՐԸ՝ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

***

Յուրաքանչյուր կնոջ սխալի մեջ տղամարդու մեղք կա:

Հերոդեր

***

Երբ կինն իրավացի չէ, նախևառաջ պետք է նրանից ներողություն խնդրել:

Կրուասե

***

Տղամարդը ներում ու մոռանում է, կինը ներում է. միայն այդքանը:

Ժերֆո

***

Լավ կնոջ հետ ամուսնությունը մի նավահանգիստ է կյանքի ալեկոծության մեջ, իսկ վատի հետ՝ ալեկոծություն է նավահանգստում:

Ջ. Պտիտսեն

***

Ով ընդունակ է կառավարել կնոջը, նա ընդունակ է պետություն կառավարել:

Բալզակ

***

Կանայք սուրբ են, կինը, որին սիրում ես, սուրբ է կրկնակի:

Ալեքսանդր Դյումա

***

Գեղեցիկ կինը շոյում է աչքերը, բարին՝ սիրտը: Առաջինը հրաշալի իր է, երկրորդը՝ գանձ:

Նապոլեոն Բոնապարտ

***

Կանայք միշտ ոգեշնչում են տղամարդկանց մեծ գործերի, սակայն միշտ խանգարում են դրանք իրագործել:

Օսկար Ուայլդ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

2020 թ. փետրվարի 18-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ կլոր-սեղան քննարկում «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների պրակտիկայի արդյունավետության բարձրացումը» թեմայով, որը վարում էր ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. դոցենտ Գ. Գրիգորյանը: Հանդիպմանը մասնակցելու և արդյունավետ քննարկում կազմակերպելու համար հրավիրվել էին Երևան քաղաքի տարբեր բաժիններից բաժնի պետի տեղակալներ, ներկա էին նաև կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ֆակուլտետների պետերը, ամբիոնի պետերը, պրակտիկայի ղեկավարները, կուրսի պետերը:

Ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. դոցենտ Գ. Գրիգորյանը հանգամանորեն ներկայացրեց պրակտիկայի կազմակերպման ընթացքում առաջացած խնդիրները և կարևորեց քննարկման անհրաժեշտությունը՝ նշելով, որ նմանատիպ քննարկումների ընթացքում են ծնվում այն կարևոր գաղափարները, որոնց միջոցով հետագայում իրականացվում են ուսումնական գործընթացի բարեփոխումները:

Ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. Ռ. Մարանդյանը և քոլեջի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. բաբախանյանը հանդես եկան «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների ուսումնական և նախաավարտական պրակտիկաների արդյունավետ կազմակերպման խնդիրները և պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկությունները» թեմայով զեկուցմամբ, որտեղ ներկայացվեցին պրակտիկայի ընթացքում ծագած տարբեր խնդիրներ: Նշվեցին պրակտիկայի ընթացքում ուսանողներին ծառայության մեջ ընդգրկելու տարբեր դեպքեր, որտեղ ուսանողը ներգրավված է լինում որպես ոստիկանության ծառայող, սակայն երբեմն դա հակասում է ուսանողի պրակտիկայի ծրագրով նախատեսված դրույթներին: Նշվեցին նաև այն դեպքերը, երբ բաժինը կանգնում է երկընտրանքի առաջ գիշերային ծառայություններում պրակտիկա անցնող ուսանողներին ընդգրկելու դեպքում: Այս առումով ելույթ ունեցավ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի պետի տեղակալ անձնակազմի գծով, ոստիկանության փոխգնդապետ Ա. Առուստամյանը և նշեց, որ Մաշտոցի բաժնում բոլոր դեպքերի ժամանակ ներգրավվում են նաև պրակտիկա անցնող ուսանողները: Առուստամյանի խոսքով՝ պրակտիկանտները թե՛ գիշերային, թե՛ տարբեր ծառայություններում ընդգրկվելու մեծ ցանկություն ունեն և ցուցաբերում են ակտիվ նախաձեռնողականություն:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի պետի տեղակալ անձնակազմի գծով, ոստիկանության փոխգնդապետ Գ. Կարապետյանը նշեց, որ, ըստ պրակտիկայի ծրագրի, պրակտիկանտները ենթարկվում են բաժնի կարգ ու կանոնին, ուստի պետք է նրանց լիարժեք ընդգրկել բաժնի առօրյայում տեղի ունեցող գործընթացներում: Ա. Առուստամյանն անդրադարձավ նաև գնահատման հարցին: Նա նշեց, որ արդյունավետ կլինի, երբ բաժինը միայն կարծիք ներկայացնի ուսանողի վերաբերյալ, իսկ անկացված պրակտիկայի վերաբերյալ գնահատումը տեղի կունենան կրթահամալիրում պրակտիկայի ղեկավարի գլխավորությամբ: Ա. Առուստամյանն առաջարկեց նաև, որ բաժինները իրենց կողմից ներկայացրած բնութագրում նշեն, թե տվյալ ուսանողը համապատասխանու՞մ է արդյոք ՀՀ ոստիկանությունում հետագա ծառայության չափանիշներին, թե՞ ոչ:

Կլոր-սեղան քննարկման վերջում Գ. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներից առողջ և բովանդակալից քննարկում կազմակերպելու համար՝ նշելով, որ կկազմվի պրակտիկայի բարելավման նոր ծրագրի նախագիծ, որտեղ հաշվի կառնվեն կլոր-սեղան քննարկման ընթացքում հնչած կարևորագույն կարծիքները:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ԻՄ ԹԱՔՈՒՆ ՍԵՐ

Ուզում եմ պատմել իմ սիրո մասին,
Բայց մնալ անհաս, ինչպես
սուրբ բագին,
Ցրել եմ ուզում պատրանքներդ սին
Ու շռայլել քեզ խոստումներ անգին:

Կուզեմ՝ քեզ համար սարերը շրջել,
Խավարչտին գիշերը
դարձնել ցերեկ,
Անհագուրդ լողալ աչքերիդ ծովում,
Չփնտրել երբեք ո՛չ ափ, ո՛չ եզերք:

Ուզում եմ այրվել աչքերիդ բոցում
Ու նորից հառնել տաք մոխիրներից,
Դողալ եմ ուզում հոգուդ ցրտերում,
Բայց և ջերմանալ քո համբույրներից:

Մարո Խիզանաշվիլի
վճարովի ուսուցման 1-ին կուրս

ՍՈՒՐԲ ՄԱՅՐԵՐ

Մեր սու՛րբ մայրեր հերոսածին,
Դու՛ք եք ազգիս փրկությունը,
Հեզ ու բարի հա՛յ աղջիկներ,
Դու՛ք եք վաղվա օրհնությունը,
Ձեզնից պիտի վաղը սերվի
Ազգափրկիչ դյուցազունը:

Դուք իմ հպա՛րտ, հերո՛ս մայրեր,
Ձեր ձեռքում է իմ սուրբ ազգի վառ ապագան,
Ձեր ձեռքում է մեր անվտանգ ու լույս ներկան,
Դուք մեր անպա՛րտ, զորե՛ղ մայրեր ...

Ձեր անկոտրում կամքով զինված,
Ամուր կանգնած ազգի կողքին՝
Ձեր հուսադրող աղոթքներով
Պաշտպանում եք մեր զինվորին ...

Ձեր օրհնանքով, առանց լացի ձեր վեհությամբ
Ուժ եք տալիս սահմանապահ անվախներին,
Ձեր քնքշանքով, առանց խոսքի ձեր մեծությամբ
Հույս եք տալիս անքուն կանգնած հերոսներին ...

Ձեր դողացող, բայց նուրբ ձեռքով
Ջուր եք լցնում գերեզմանի ծաղիկներին,
Խունկ եք ծխում անմահների գերեզմանին...

Փա՛ռք ու պատի՛վ հերոսածին հայ մայրերին,
Փա՛ռք ու պատի՛վ անմահացած հերոսներին ...

Արևիկ Մկրտչյան
մագիստրատուրայի 2-րդ կուրսի սովորող,
ոստիկանության լեյտենանտ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 03. 2020թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: